

Luys Lnyu®



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

2024Թ. ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....1

2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ 5

3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ 9

 3.1. Բյուջեի ծախսերը ծրագրային դասակարգմամբ 11

4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ13

5. ԱՄՓՈՓՈՒՄ15

1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Վերջին շրջանում համաշխարհային տնտեսության զարգացման գլխավոր մարտահրավերներին ավելացան նորերը, որոնցով պայմանավորված բազմաթիվ գործոններ, բնականաբար, բացասական ներգործություն ունեցան ինչպես Հայաստանի հիմնական գործընկեր երկրների, այնպես էլ ՀՀ տնտեսության վրա: Չնայած այդ հանգամանքին, 2024թ. առաջին եռամսյակում հիմնական գործընկեր երկրներում տնտեսական աճի տեմպերն արագացել են, ինչը զուգորդվել է պետական և մասնավոր սպառման աճերով: Միաժամանակ, այդ երկրներում արդեն ավելի քան երկու տարի շարունակվող զսպող դրամավարկային քաղաքականության դիրքի պահպանման պայմաններում նկատվել է գնաճի կայունացում:

Վերոհիշյալ մարտահրավերներից մեկի՝ ռուս-ուկրաինական զինված հակամարտության՝ ՀՀ տնտեսության վրա բարենպաստ ազդեցությունը գերազանցել է դրա բացասական ներգործությանը: Արդյունքում, վերջին երկու տարում արձանագրված բարձր տնտեսական ակտիվությունը պահպանվել է նաև 2024 թվականի առաջին եռամսյակում՝ առավելապես պայմանավորված արդյունաբերության, առևտրի և ծառայությունների ոլորտների աճերով: Շինարարության և գյուղատնտեսության ճյուղերի նպաստումներն անհամեմատ ավելի փոքր են եղել: Տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ) այդ ժամանակահատվածի համար կազմել է 14.3%՝ հիմնականում պայմանավորված ոսկերչական արտադրատեսակների վերամշակման կտրուկ աճով և, որոշ չափով, բռնի տեղահանված արցախցիների տնտեսական գործունեության ազդեցություններով:

Արդյունաբերության ճյուղում 2024 թվականի առաջին եռամսյակում գրանցվել է 30.4% աճ՝ առավելապես պայմանավորված մշակող արդյունաբերության աճով, որի նպաստումը ընդհանուր արդյունաբերության աճին կազմել է 29.0 տոկոսային կետ: Մինչդեռ, «հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում» ենթաճյուղը նվազել է 4.6%-ով՝ 1.0 տոկոսային կետով հակազդելով արդյունաբերության ճյուղի աճին:

Մշակող արդյունաբերության աճը հիմնականում պայմանավորված է եղել ոսկերչական արտադրատեսակների արտադրության կտրուկ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 11.9 անգամ, աճով: Մշակող արդյունաբերության աճին այն նպաստել է 49.3 տոկոսային կետով: Մինչդեռ, մշակող արդյունաբերության՝ ՀՀ տնտեսության համար էական կարևորություն ունեցող մի շարք ենթաճյուղերում անկում է արձանագրվել: Մասնավորապես, սննդամթերքի արտադրությունում արձանագրվել է 2.0% անկում, հիմնային

մետաղների արտադրությունում՝ 10.8%, ծխախոտի արտադրությունում՝ 3.9%, հագուստի արտադրությունում՝ 8.8%, քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրությունում՝ 11.4% և այլն: **Այսինքն՝ մշակող արդյունաբերության, որոշակի իմաստով, «համակարգաստեղծ» ենթաճյուղերի արտադրությունը նվազում է, մինչդեռ, ոսկերչական արտադրատեսակների արտադրությունը, կարճաժամկետ էֆեկտների հաշվին, էական աճ է գրանցում: Դրանով իսկ առաջացել է արդյունաբերության կառուցվածքի վատթարացման լուրջ սպառնալիք:**

Գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության համախառն արտադրանքն աճել է 4.5%-ով՝ պայմանավորված հիմնականում բուսաբուծության և ձկնորսության աճով՝ ոլորտի աճին նպաստելով համապատասխանաբար 2.8 և 1.5 տոկոսային կետով: Անասնաբուծությունն ունեցել է անհամեմատ ավելի համեստ՝ 0.4%, աճ:

Շինարարության ոլորտի 11.7% աճը հիմնականում ապահովվել է շնորհիվ բնակչության և կազմակերպությունների միջոցներով իրականացված շինարարության ծավալների: Դրանք շինարարության ոլորտի աճին նպաստել են համապատասխանաբար 7.8 և 2.2 տոկոսային կետով: Կազմակերպությունների միջոցներով իրականացված շինարարության ծավալների աճը պայմանավորվել է բնակարանային շինարարության ծավալների աճով, որին նպաստել են հիպոթեքային վարկերի տոկոսավճարների՝ եկամտահարկից վերադարձման պետական աջակցության ծրագրում կատարված փոփոխությունները:

Ուշագրավ է, որ կազմակերպությունների միջոցներով իրականացված շինարարության ծավալների մեջ օտարերկրյա ներդրողների ֆինանսավորմամբ իրականացած շինարարության ծավալը նվազել է 11 անգամ, ինչը ներդրումային դաշտում անբարենպաստ փոփոխությունների մասին ահազանգող ազդակ է:

Պետական բյուջեի և համայնքների միջոցներով իրականացված շինարարության ծավալներն աճել են: Ընդ որում՝ պետական բյուջեի միջոցներով ֆինանսավորվող շինարարության աճը պայմանավորված է եղել միջազգային վարկերով ֆինանսավորվող շինարարության աճով, իսկ զուտ պետական բյուջեի միջոցներով ֆինանսավորվող շինարարության ծավալները նվազել են:

Ծառայություններն աճել են 5.0%-ով՝ հիմնականում պայմանավորված ֆինանսական և ապահովագրական գործունեության աճով, որի նպաստումը կազմել է 5.3 տոկոսային կետ: Իր հերթին, ֆինանսական և ապահովագրական գործունեության աճը պայմանավորված է եղել բանկային գործունեության

արձանագրած աճով: Ծառայությունների ոլորտի աճին 2.2 տոկոսային կետով հակազդել է «տրանսպորտ» ենթաճյուղի նվազումը:

Առևտրի 26.5% աճը հիմնականում պայմանավորված է եղել մեծածախ առևտրի աճով, որի նպաստումն ընդհանուր առևտրի աճին կազմել է 23.5 տոկոսային կետ: Մեծածախ առևտրի բարձր աճը պայմանավորված է տնտեսության մյուս հատվածներում առկա բարձր պահանջարկով, ապրանքների պաշարների կուտակմամբ, ինչպես նաև մեծածախ առևտրում վերաարտահանման մարժայի մեծ դերով:

Արտաքին առևտրի ցուցանիշների աճը նույնպես զգալի է՝ պայմանավորված արտաքին պահանջարկի, մասնավորապես վերաարտահանման (հատկապես՝ ԱՄԷ), բարձր ծավալներով: Արտաքին ապրանքաշրջանառությունը 2024 թվականի առաջին եռամսյակում կազմել է 9.2 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 2.1 անգամ **և զգալի չափով պայմանավորված լինելով վերաարտահանման մեծ ծավալներով**: Հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել են նաև դոլարային արտահայտությամբ արտահանման և ներմուծման աճի բարձր տեմպեր. արտահանումն աճել է 2.7 անգամ՝ կազմելով 4.4 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 75.8%-ով և կազմել 4.7 մլրդ ԱՄՆ դոլար: 2024թ. առաջին երեք ամիսներին ապրանքների գծով արտաքին առևտրի բացասական մնացորդը նախորդ տարվա նկատմամբ բարելավվել է 69.8%-ով և կազմել -324 մլն ԱՄՆ դոլար:

Միջին ամսական անվանական աշխատավարձը 2024թ. առաջին եռամսյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 8.2%-ով՝ կազմելով 282,879 դրամ: Պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 10.2%-ով՝ կազմելով 208,752 դրամ, իսկ ոչ պետականում՝ 7.3%-ով և կազմել 313,260 դրամ:

Գնաճը 2024թ. առաջին եռամսյակի ընթացքում գտնվել է բացասական տիրույթում: Գնանկումային միջավայրը հիմնականում պայմանավորվել է դրամի արժևորմամբ և համաշխարհային ապրանքային շուկաներում շարունակվող գնային ճգրտումներով: Նշված գործոնների միաժամանակյա դրսևորման պայմաններում և՛ 12-ամսյա, և՛ միջին գնաճի տեմպը մարտին կազմել են -1.2%: Արձագանքելով գնանկումային միջավայրին՝ ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է նվազեցնել քաղաքականության տոկոսադրույքը՝ մարտին այն սահմանելով 8.5%:

Դեպի ՀՀ ֆիզիկական անձանց փոխանցումները 2024թ. առաջին եռամսյակում նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ նվազել են: ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով այլ երկրներից մուտք եղած և

արտերկիր կատարված փոխանցումների զուտ ներհոսքը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 49.6%-ով և կազմել է 278.6 մլն դոլար:

Չնայած տնտեսական աճի առումով պատկերն առաջին հայացքից բավական տպավորիչ է, սակայն խոսքն ըստ էության մի ենթաճյուղի ցուցանիշների կտրուկ ավելացման մասին է: Պաշտոնական վիճակագրությունը բարձր աճեր է գրանցում, մինչդեռ, տնտեսության մի շարք կարևորագույն ոլորտներ անկում են ապրում: Այս երևույթն առկա է արդեն մի քանի ամիս և առաջիկայում շարունակվելու դեպքում ՀՀ տնտեսության «դեֆորմացիայի» հետ կապված խնդիրներն էլ ավելի կահագնանան:

2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

ՀՀ 2024թ. պետական բյուջեով առաջին եռամսյակի համար ՀՀ կառավարության կողմից հաստատված եռամսյակային համամասնություններով եկամուտների, ծախսերի և պակասուրդի մեծությունները սահմանվել էին համապատասխանաբար 562.2 մլրդ դրամ, 597.1 մլրդ դրամ և 34.9 մլրդ դրամ:

2024 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են 525.0 մլրդ դրամ (Աղյուսակ 1): **Նշված ժամանակահատվածում արձանագրվել է ՀՀ պետական բյուջեի եկամուտների աճի տեմպի դանդաղում:** Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համադրելի¹ ցուցանիշի համեմատ աճը կազմել է 6.0% (2023թ. առաջին եռամսյակում այդ տեմպը 13.7% էր): Ի դեպ, քանի որ բյուջեի ընդհանուր եկամուտների՝ 2024թ. առաջին եռամսյակի ցուցանիշը ներառում է նաև հիպոթեքային վարկերի վճարված տոկոսների գումարի վերադարձը (որը նախկինում նվազեցվում էր հարկային եկամուտներից), ապա **հաշվառման նախկին մոտեցումը կիրառելու դեպքում եկամուտների աճը կկազմի 5.2%:**

Բյուջեի ընդհանուր եկամուտներից 524.5 մլրդ դրամը գոյացել է ներքին աղբյուրներից, իսկ 0.5 մլրդ դրամը ստացվել է պաշտոնական դրամաշնորհների տեսքով:

Չնայած նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճին, **2024թ. առաջին եռամսյակի ճշտված պլանի նկատմամբ բյուջեի եկամուտները թերակատարվել են 6.8%-ով:** Ընդ որում, թերակատարում է արձանագրվել թե՛ ներքին աղբյուրներից և թե՛ պաշտոնական դրամաշնորհների տեսքով ստացվող եկամուտների գծով՝ համապատասխանաբար 6.4%-ով (36.1 մլրդ դրամով) և 78.6%-ով (2.0 մլրդ դրամով):

¹ Քանի որ 2024թ. պետական բյուջեի եկամուտների կազմում ներառված է նաև հիպոթեքի տոկոսագումարների դիմաց եկամտային հարկի վերադարձը՝ 16.4 մլրդ դրամ, 2023թ. առաջին եռամսյակի փաստացի մեծությանն ավելացվել է նշված ցուցանիշի՝ այդ ժամանակահատվածի փաստացի մեծությունը՝ 11.8 մլրդ դրամ:

Աղյուսակ 1. Պետական բյուջեի եկամուտները, մլրդ դրամ

	2023թ.	2024թ.			
	Առաջին եռամսյակի փաստացի	Առաջին եռամսյակի պլան	Առաջին եռամսյակի ճշտված պլան	Առաջին եռամսյակի փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
Ընդամենը եկամուտներ, այդ թվում՝	483.6	562.2	563.1	525.0^{*)}	93.2
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	461.4	543.6	544.2	500.6^{*)}	92.0
Պաշտոնական դրամաշնորհներ	1.0	2.2	2.5	0.5	21.4
Այլ եկամուտներ	21.3	16.4	16.4	23.9	145.6

**) Առանց հիպոթեքի տոկոսագումարների դիմաց եկամտային հարկի վերադարձը պակասեցնելու:*

Պետական բյուջեի հարկային եկամուտները և պետական տուրքերը կազմել են 500.6 մլրդ դրամ՝ ճշտված պլանի ցուցանիշից՝ 563.1 մլրդ դրամից 8.0%-ով պակաս: **Ի դեպ, հաստատված բյուջեով պլանավորված էր ավելի փոքր մեծություն՝ 562.2 մլրդ դրամ, որը ճշտված պլանով ավելացվել էր, սակայն փաստացի ստացված եկամուտները զգալիորեն զիջում են նույնիսկ հաստատված պլանի մեծությանը:**

Հարկային եկամուտների և պետական տուրքերի 2024թ. առաջին եռամսյակի ցուցանիշը ևս ներկայացված է առանց հիպոթեքի տոկոսագումարների դիմաց եկամտային հարկի վերադարձը պակասեցնելու, և այս ցուցանիշի աճը հաշվարկելու համար նույնպես դիտարկվել է 2023-ի համադրելի ցուցանիշը²: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համադրելի ցուցանիշի համեմատ աճը կազմում է 5.8%: Առանց դիտարկելու հիպոթեքի տոկոսագումարների դիմաց եկամտային հարկի վերադարձը, հարկային եկամուտների և պետական տուրքերի աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմում է 5.0%: Նախորդ տարվա համեմատությամբ հարկային եկամուտների աճի տեմպը զգալիորեն դանդաղել է, ինչը պայմանավորված է հարկման բազաների, մասնավորապես՝ հարկունակ սպառման, ներմուծման և կազմակերպությունների շահույթների աճի տեմպերի որոշակի դանդաղմամբ: **Բարձր SU3-ի պարագայում հարկային եկամուտների գրեթե եռակի ցածր աճի տեմպը խիստ մտահոգիչ է**

² Այս դեպքում ևս 2023թ. առաջին եռամսյակի փաստացի մեծությանն ավելացվել է հիպոթեքի տոկոսագումարների դիմաց եկամտային հարկի վերադարձի՝ այդ ժամանակահատվածի փաստացի մեծությունը:

և, թերևս, վկայում է ՀՀ տնտեսությունում տեղի ունեցող անառողջ գործընթացների մասին:

Աղյուսակ 2. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2023թ. առաջին եռամսյակի փաստացի (մլրդ դրամ)	2024թ. առաջին եռամսյակի փաստացի (մլրդ դրամ)	2024թ. առաջին եռամսյակը 2023թ. առաջին եռամսյակի նկատմամբ (%)
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	461.4	500.6	108.5
1. Հարկային եկամուտներ, այդ թվում՝	448.8	485.7	108.2
ԱԱՀ	165.6	164.3	99.2
Ակցիզային հարկ	32.5	30.1	92.6
Շահութահարկ	39.0	50.8	130.1
Մաքսատուրք	16.3	17.9	109.7
Եկամտային հարկ	132.9	150.6	113.3
Շրջանառության հարկ	13.0	15.1	116.5
Սոցիալական վճար (կուտակային կենսաթոշակի գծով)	21.4	25.7	120.3
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	10.6	12.8	120.8
Այլ հարկեր	17.5	18.4	105.5
2. Պետական տուրք	12.6	14.9	118.7

Հարկային եկամուտների և պետական տուրքերի ընդհանուր մեծության մեջ ամենամեծ տեսակարար կշիռն ունի ավելացված արժեքի հարկը՝ 32.8%: Բացարձակ մեծությամբ, սակայն, այն նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել է՝ 0.8%-ով կամ 1.3 մլրդ դրամով: Հարկային եկամուտների և պետական տուրքերի ընդհանուր մեծության մեջ տեսակարար կշիռով հաջորդ մեծ եկամտատեսակը եկամտային հարկն է, որի տեսակարար կշիռը 30.1% է: Հիպոթեքի տոկոսագումարների դիմաց եկամտային հարկի վերադարձի գումարները հանելուց հետո նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճը կազմում է 0.9% կամ 1.2 մլրդ դրամ: Հարկային եկամուտների և պետական տուրքերի ընդհանուր մեծության մեջ զգալի տեսակարար կշիռ ունեն նաև շահութահարկը (տեսակարար կշիռը՝ 10.1%, աճը՝ 30.1%), ակցիզային հարկը (տեսակարար կշիռը՝ 6.0%, նվազումը՝ 7.4%) և սոցիալական վճարը (տեսակարար կշիռը՝ 5.1%, աճը՝ 20.3%):

2024 թվականի առաջին եռամսյակում պետական բյուջե են մուտքագրվել 14.9 մլրդ դրամ պետական տուրքեր՝ կազմելով եռամսյակային ծրագրի 105.4%-ը:

2024 թվականի առաջին եռամսյակում, ինչպես և 2023-ի նույն ժամանակահատվածում դրամաշնորհների պլանավորված մեծության

գերակշիռ մասը չի ստացվել: Դրանց գծով բյուջեի մուտքերը կազմել են առաջին եռամսյակում ծրագրված մեծության ընդամենը 21.4%-ը. ճշտված պլանի 2.5 մլրդ դրամի դիմաց դրանք կազմել են ընդամենը 0.5 մլրդ դրամ՝ կրկնակի ցածր, քան նախորդ տարվա նույն ժամանակահատվածում (ընդ որում՝ այս ցուցանիշը 2023-ի առաջին եռամսյակում ևս նվազել էր՝ 25.9%-ով զիջելով 2022-ի նույն ժամանակահատվածի ցուցանիշին): **Պաշտոնական դրամաշնորհների գծով 78.6% թերակատարումը փաստում է, որ իրականացվող նպատակային ծրագրերի ցածր կատարողականը մնում է «տխուր ավանդույթ» և վկայում է այն մասին, որ կառավարությունը շարունակում է լրջորեն թերանալ դրամաշնորհների ստացման համար անհրաժեշտ՝ դոնորների հետ նախապես համաձայնեցված նախապայմանների կատարման հարցում:**

Բյուջեի այլ եկամուտները 2023թ. առաջին եռամսյակի ցուցանիշից 11.9%-ով կամ 2.5 մլրդ դրամով ավելի են, ինչը հիմնականում պայմանավորված է իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերի և իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժինների աճով:

3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

ՀՀ պետական բյուջեի փաստացի ծախսերը 2024 թվականի առաջին եռամսյակում կազմել են 525.9 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից ավելի է 24.4%-ով կամ 103.2 մլրդ դրամով: Չնայած այդ աճին, արձանագրվել է ճշտված պլանով ծրագրված մեծության համեմատ բյուջեի ծախսերի զգալի թերակատարում 17.5%-ով (111.7 մլրդ դրամով): Ի դեպ, ընդհանուր ծախսերի թերակատարումն առկա է նաև հաստատված պլանի համեմատ:

Ճշտված պլանի նկատմամբ թերակատարում է արձանագրվել թե՛ ընթացիկ, թե՛ կապիտալ ծախսերի գծով՝ համապատասխանաբար 16.5 և 29.3 տոկոս: Թերակատարման ընդհանուր գումարի 75.9%-ը՝ ընթացիկ ծախսերի, իսկ 24.1%-ը՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների գծով է (Աղյուսակ 3):

Աղյուսակ 3. ՀՀ պետական բյուջեի ծախսերը (մլրդ դրամ)

ԾԱԽՍԵՐ	2023թ. առաջին եռամսյակի փաստացի	2024թ. առաջին եռամսյակի պլան	2024թ. առաջին եռամսյակի ճշտված պլան	2024թ. առաջին եռամսյակի փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ (%)
Ընդամենը ծախսեր	422.7	597.1	637.5	525.9	82.5
Ընթացիկ ծախսեր	394.2	547.8	545.7	461.0	84.5
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	28.5	49.3	91.8	64.9	70.7

Պետական բյուջեի ծախսերի 98.3%-ը (517.0 մլրդ դրամ) կատարվել է ներքին աղբյուրների հաշվին, իսկ դրանց գծով եռամսյակային ծրագիրը կատարվել է 83.2%-ով: Բյուջեի ծախսերի 1.7%-ը (8.8 մլրդ դրամ) ֆինանսավորվել է արտաքին աղբյուրներից. դրանց գծով կատարողականը 54.7% է:

Ընթացիկ ծախսերը 2024թ. առաջին եռամսյակում կազմել են 461.0 մլրդ դրամ: Դրանց դեպքում նույնպես, 2024թ. առաջին եռամսյակում, չնայած նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 16.9% աճին, ճշտված պլանի համեմատ առկա է 15.5% թերակատարում: Ընթացիկ ծախսերի դեպքում նույնպես թերակատարումն առկա է նաև հաստատված պլանի նկատմամբ:

Ի դեպ, ինչպես և նախորդ տարվա առաջին եռամսյակում, **թերակատարվել են ընթացիկ ծախսերի քուլոր բաղադրիչները**: Զգալի չափով թերակատարվել են «ծառայությունների և ապրանքների ձեռքբերում», «այլ ծախսեր» և «դրամաշնորհներ» հոդվածների գծով ծախսերը՝ ճշտված պլանի համեմատ համապատասխանաբար 39.9%-ով, 36.1%-ով և 22.1%-ով:

Աղյուսակ 4. Պետական բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման, մլրդ դրամ

	2023թ.	2024թ.			
	Առաջին եռամսյակի փաստացի	Առաջին եռամսյակի պլան	Առաջին եռամսյակի ճշտված պլան	Առաջին եռամսյակի փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
Ընդամենը ծախսեր	422.7	597.1	637.5	525.9	82.5
Ընթացիկ ծախսեր	394.2	547.8	545.7	461.0	84.5
Աշխատանքի վարձատրություն	40.0	51.0	50.8	45.2	89.0
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	32.2	38.5	24.3	14.6	60.1
Տոկոսավճարներ	37.7	43.7	43.7	39.6	90.7
Սուբսիդիաներ	28.6	39.3	39.2	35.3	90.0
Դրամաշնորհներ	51.6	68.8	71.4	55.7	77.9
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	160.9	240.5	259.5	234.2	90.3
Այլ ծախսեր	43.1	66.0	56.8	36.3	63.9
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	28.5	49.3	91.8	64.9	70.7
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	30.4	52.3	94.8	71.0	74.9
Շենքեր և շինություններ	26.5	42.5	84.6	66.2	78.3
Մեքենաների և սարքավորումների ձեռքբերում, պահպանում և հիմնանորոգում	3.0	7.7	7.9	4.0	50.6
Այլ հիմնական միջոցներ	0.9	2.1	2.3	0.8	34.4
Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր	(1.9)	(3.0)	(3.0)	(6.1)	203.8

Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը (կապիտալ ծախսերը) 2024թ. առաջին եռամսյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 133.6%-ով և կազմել 71.0 մլրդ դրամ, **սակայն դրանք ևս ճշտված պլանի համեմատ զգալիորեն՝ 25.1%-ով, թերակատարվել են:** Ընդ որում, թերակատարում է արձանագրվել կապիտալ ծախսերի բոլոր բաղադրիչների գծով:

Ի դեպ, պետական բյուջեի ծախսերի մասով կատարվել են էական վերանայումներ, որոնք արտացոլվել են ճշտված պլանում: **Ընդ որում, ուշագրավ**

է, որ նույնիսկ վերանայումից հետո, փաստացի ձևավորված գրեթե բոլոր մեծություններն էապես շեղվում են ճշտված պլանի ցուցանիշներից: Ավելին, դրանց մի մասի դեպքում, փաստացի մեծության շեղումը նախնական պլանավորված մեծությունից ավելի փոքր է, քան ճշտված պլանի մեծությունից շեղումը: Այսպես, օրինակ՝ «2024թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով ի սկզբանե պլանավորվել էր, որ առաջին եռամսյակում պետական բյուջեի ընդհանուր ծախսերը կազմելու են 597.1 մլրդ դրամ: Այնուհետև ճշտված պլանով այդ ցուցանիշը բարձրացվել էր մինչև 637.5 մլրդ դրամ, մինչդեռ փաստացի մեծությունը՝ 525.9 մլրդ դրամ է, որը զգալիորեն պակաս է նույնիսկ նախնական պլանավորված մեծությունից:

3.1. Բյուջեի ծախսերը ծրագրային դասակարգմամբ

2024թ. ՀՀ պետական բյուջեով առաջին եռամսյակում նախատեսված էր իրականացնել 161 ծրագիր: Կատարված ճշտումների արդյունքում այդ թիվն ավելացվել է երկուսով: Առաջին եռամսյակում փաստացի միջոցներ են օգտագործվել 155 ծրագրերի գծով:

ՀՀ 2024թ. պետական բյուջեով առաջին եռամսյակում նախատեսված 759 միջոցառումներից (առանց ՀՀ կառավարության պատասխանատվությամբ նախատեսված 4 միջոցառումների) ամբողջությամբ կամ մասնակիորեն կատարվել են 592-ը կամ 78%-ը:

Առաջին եռամսյակի ճշտված պլանի նկատմամբ ծրագրերը իրականացվել են 82.5%-ով: Փաստացի ծախսերը ճշտված պլանի ցուցանիշից պակաս են եղել 111.7 մլրդ դրամով: Այդ շեղման զգալի մասն արձանագրվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի (23.8 մլրդ դրամ), պաշտպանության (13.2 մլրդ դրամ), տարածքային կառավարման և ենթակառուցվածքների (13.2 մլրդ դրամ), կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (12.1 մլրդ դրամ) և էկոնոմիկայի (11.1 մլրդ դրամ) նախարարությունների պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերում:

Հաշվետվությունում նշված բոլոր պատասխանատու մարմինների գծով արձանագրվել է իրականացվող ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի թերակատարում:

Ճշտված պլանի համեմատ առավել մեծ թերակատարումն արձանագրվել է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության (թերակատարումը՝ 69.4%) և ՀՀ էկոնոմիկայի նախարարության (թերակատարումը՝ 48.9%) պատասխանատվության տակ գտնվող ծրագրերի գծով:

Ստորև ներկայացվում են տվյալներ իրականացված որոշ ծրագրերի կատարման վերաբերյալ.

Աղյուսակ 5. 2024թ. առաջին եռամսյակում իրականացված որոշ ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերը, մլն դրամ

N	Ծրագիր	Պատասխանատու	2024թ. առաջին եռամսյակի ճշտված պլան	2024թ. առաջին եռամսյակի փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
1.	Ոռոգման համակարգի առողջացում	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքներ ի նախարարություն	3,585.9	1,692.2	47.2
2.	Քաղաքային զարգացում	Էկոնոմիկայի նախարարություն	1,391.2	508.4	36.5
3.	Գյուղատնտեսության խթանման ծրագիր	Էկոնոմիկայի նախարարություն	6,208.0	2,369.6	38.2
4.	Անտառների կառավարում	Շրջակա միջավայրի նախարարություն	585.3	273.5	46.7
5.	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի և շուկայի զարգացման ծրագիր	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	1,131.0	300.9	26.6
6.	Ռազմարդյունաբերության և համալիրի զարգացում		564.0	0.0	0.0

Այս անգամ էլ իրականացվող ծրագրերի բոլոր թերակատարումների համար բյուջեի հաշվետվությունում նշված են տարբեր «մեղմացուցիչ հանգամանքներ», այդ թվում՝ եղանակային վատ պայմաններ, գնման գործընթացի հետ կապված խնդիրներ, դոնորների հետ ընթացակարգային խնդիրներ և այլն: Այնուամենայնիվ, **նկատի ունենալով, որ այս խնդիրը տարիներ ի վեր առկա է և արդեն «քրոնիկ» է դարձել, արձանագրենք, որ գործող իշխանությունն այդպես էլ չի կարողանում լուծել պետական կառավարման համակարգում տնտեսության համար առանցքային ծրագրերի արդյունավետ իրականացման կարողությունների ապահովման խնդիրը:** Իսկ արդյունքում, վտանգվում են թե՛ ընթացիկ և թե՛ ապագա տնտեսական աճն ու զարգացումը, քանի որ տնտեսության ներուժի տեսանկյունից կարևորագույն ծրագրերը շարունակում են իրականացվել թերի և/կամ ոչ ժամանակին:

4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

2024 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեն ունեցել է 0.9 մլրդ դրամ պակասուրդ՝ ծրագրված 74.4 մլրդ դրամ պակասուրդի և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 60.9 մլրդ դրամ հավելուրդի դիմաց:

Եռամսյակի ծրագրված ցուցանիշի համեմատ պակասուրդի ցածր մակարդակը պայմանավորված է ծախսերի ցածր կատարողականով:

2024 թվականի երեք ամիսներին հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը համախառն պահանջարկի վրա նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ գնահատվում է թույլ ընդլայնող (0.5)՝ պայմանավորված եկամուտների (0.2) և ծախսերի (0.3) ազդեցություններով:

Աղյուսակ 6. Պետական բյուջեի պակասուրդը և ֆինանսավորման աղբյուրները, մլրդ դրամ

	2023թ.	2024թ.			
	Առաջին եռամսյակի փաստացի	Առաջին եռամսյակի պլան	Առաջին եռամսյակի ճշտված պլան	Առաջին եռամսյակի փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
Բյուջեի պակասուրդը (+) / հավելուրդը (-)	-60.9	34.9	74.4	0.9	1.2
<u>Պակասուրդի ֆինանսավորումը՝</u>					
Ա. Ներքին աղբյուրներ, այդ թվում՝	-0.1	58.4	97.7	30.3	31.0
1. Փոխառու զույր միջոցներ	76.3	110.8	110.8	118.8	107.3
2. Ֆինանսական զույր ակտիվներ	-76.4	-52.4	-13.0	-88.5	679.1
Բ. Արտաքին աղբյուրներ, այդ թվում՝	-60.8	-23.5	-23.4	-29.5	126.2
1. Փոխառու զույր միջոցներ	-16.0	-23.5	-23.5	-29.0	123.7
2. Ֆինանսական զույր ակտիվներ	-44.8	0.1	0.1	-0.5	-477.8

Հաշվետու ժամանակահատվածում ներքին զույր փոխառու միջոցները կազմել են 118.8 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից ավելի է 55.8%-ով: Ինչպես և 2023թ. առաջին եռամսյակում, արտաքին փոխառու միջոցների գծով մարումները գերազանցել են մուտքերին, ինչի հաշվին արտաքին զույր փոխառու միջոցների ծավալը բացասական է եղել՝ -29.0 մլրդ դրամ:

2024թ. առաջին եռամսյակը ևս (ինչպես և նախորդ տարվա բոլոր հաշվետու ժամանակաշրջանները) բացառություն չէ նպատակային վարկերի գծով մուտքերի ցածր կատարողականի առումով. դրանք կազմել են 9.3 մլրդ դրամ կամ ճշտված պլանի ցուցանիշի (16.4 մլրդ դրամ) 56.8%-ը: **Ցածր**

կատարողականը նպատակային (կապիտալ) ծրագրերի թերակատարման հետևանք է:

Ի դեպ, կառավարության՝ բյուջետային պլանավորման հետ կապված լուրջ խնդիրները զգացվում են նաև բյուջեի պակասուրդի դեպքում: Դրա փաստացի մեծությունը նույնպես էապես շեղվում է պլանային ցուցանիշից: Ավելին, վերանայման արդյունքում այն 34.9 մլրդ դրամից բարձրացվել էր մինչև 74.4 մլրդ դրամ, մինչդեռ փաստացի պակասուրդը կազմել է ընդամենը 0.9 մլրդ դրամ:

ՀՀ պետական պարտքը 2024 թվականի մարտի 31-ի դրությամբ կազմել է 4,783.5 մլրդ դրամ (12.2 մլրդ ԱՄՆ դոլար), որից 2,527.9 մլրդ դրամը (6.4 մլրդ ԱՄՆ դոլարը) կազմել է արտաքին պարտքը, 2,255.6 մլրդ դրամը (5.8 մլրդ ԱՄՆ դոլարը)՝ ներքին պարտքը: ՀՀ պետական պարտքի ցուցանիշները նախորդ տարեվերջի համեմատ դրամային և դոլարային արտահայտությամբ փոփոխվել են տարբեր ուղղություններով. դրամային արտահայտությամբ այն նվազել է 0.2%-ով (11.4 մլրդ դրամով), մինչդեռ դոլարային արտահայտությամբ աճել է 2.7%-ով (317.7 մլն ԱՄՆ դոլարով): Դա պայմանավորված է եղել ԱՄՆ դոլար/դրամ փոխարժեքի՝ 2023թ. վերջի համեմատ 2024թ. առաջին եռամսյակի վերջի դրությամբ 2.8% նվազմամբ:

Դոլարային արտահայտությամբ ՀՀ պետական պարտքի աճը պայմանավորված է ՀՀ կառավարության պարտքի՝ նախորդ տարեվերջի համեմատ 332.3 մլն ԱՄՆ դոլարի աճով: Այն 2024թ. մարտի 31-ի դրությամբ կազմել է 4,572.6 մլրդ դրամ (11.6 մլրդ ԱՄՆ դոլար): Ընդ որում, արտաքին պարտքը նվազել է 59.0 մլն դոլարով, իսկ ներքին պարտքը, ընդհակառակը, աճել է 391.3 մլն դոլարով: **Ներքին պարտքի կշիռը կառավարության պարտքի պորտֆելում շարունակում է աճել՝ մարտի վերջի դրությամբ այն հասել է 49.3%-ի:**

ՀՀ պետական պարտատոմսերի շուկայում տեղաբաշխման միջին կշռված եկամտաբերությունը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ զգալիորեն նվազել է: Պետական կարճաժամկետ պարտատոմսերի միջին տոկոսադրույքը (եկամտաբերությունը) 2024թ. մարտին կազմել է 9.6%՝ նախորդ տարվա մարտի համեմատ նվազելով 2.0 տոկոսային կետով: Միջնաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը նույնպես նվազել է՝ կազմելով 9.9% և նախորդ տարվա մարտի համեմատ նվազելով 2.1 տոկոսային կետով:

5. ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով արձանագրենք.

- Ռուս-ուկրաինական ռազմական հակամարտության սկզբից ՀՀ տնտեսությունում արձանագրված բարձր տնտեսական ակտիվությունը պահպանվել է նաև 2024 թվականի առաջին եռամսյակում. տնտեսական ակտիվության ցուցանիշը կազմել է 14.3%: **Նշված բարձր ցուցանիշն առավելապես պայմանավորված է ժամանակավոր և ոչ կայուն երևույթներով, մասնավորապես՝ ոսկերչական գործունեության ծավալների կտրուկ աճով: Եվ պատկերը, կախված արտաքին, դժվար կանխատեսելի իրավիճակից, կարող է կտրուկ փոխվել (ոսկերչական գործունեության ծավալները կտրուկ նվազել)՝ էական բացասական ազդեցություն թողնելով մակրոտնտեսական ցուցանիշների վրա:** Ըստ պաշտոնական վիճակագրության՝ ոսկերչական արտադրատեսակների արտադրությունը (հիմնականում՝ վերամշակումը) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 11.9 անգամ: Մինչդեռ, արդյունաբերության՝ ՀՀ տնտեսության համար էական կարևորություն ունեցող մի շարք ենթաճյուղերում անկումը շարունակվում է: **Այսինքն՝ արդյունաբերության, որոշակի իմաստով, «համակարգաստեղծ» ենթաճյուղերի արտադրության նվազման ֆոնին ոսկերչական արտադրատեսակների արտադրությունն էական աճ է գրանցում:** Արդյունքում շարունակում է վատթարանալ արդյունաբերության կառուցվածքը:

- 2024թ. առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են 525.0 մլրդ դրամ: Ի դեպ, 2024թ. պետական բյուջեի եկամուտների ծրագրված և փաստացի ցուցանիշների հաշվարկում կատարվել է մեթոդաբանության փոփոխություն, համաձայն որի դրանցում ներառվում է նաև հիպոթեքային վարկերի վճարված տոկոսների վերադարձի գումարը (որը նախկինում նվազեցվում էր հարկային եկամուտներից): **Այս պարագայում ևս պետական բյուջեի եկամուտները ճշտված պլանի նկատմամբ թերակատարվել են 6.8%-ով: Հատկանշական է, որ թերակատարումն առկա է նաև հաստատված բյուջեի նկատմամբ: Թերակատարումից բացի, արձանագրվել է նաև բյուջեի եկամուտների աճի տեմպի դանդաղում՝ հիմնականում պայմանավորված բարձր տնտեսական աճի պայմաններում ոչ հարկունակ ճյուղերի աճով:**

- ՀՀ պետական բյուջեի փաստացի ծախսերը 2024 թվականի առաջին եռամսյակում կազմել են 525.9 մլրդ դրամ: Դրանք նույնպես ճշտված պլանի համեմատ թերակատարվել են՝ 17.5%-ով: Ընդ որում, թերակատարումը վերաբերում է թե՛ ընթացիկ և թե՛ կապիտալ ծախսերին: Ի դեպ, բյուջեի

ընդհանուր, ինչպես նաև ընթացիկ ծախսերի դեպքում հաստատված բյուջեի նկատմամբ ևս արձանագրվել է թերակատարում:

Թերակատարվել են հաշվետվությունում նշված բոլոր պատասխանատու մարմինների գծով իրականացվող ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերը: Ամենացածր կատարողականն արձանագրվել է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և ՀՀ էկոնոմիկայի նախարարության պատասխանատվության տակ գտնվող ծրագրերի գծով:

- 2024 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեն ունեցել է 0.9 մլրդ դրամ պակասուրդ՝ ճշտված պլանով ծրագրված 74.4 մլրդ դրամ և հաստատված պլանով նախատեսված 34.9 մլրդ դրամ պակասուրդի փոխարեն:

- Հաշվետու ժամանակաշրջանում ևս կառավարությունն «աչքի է ընկել» բյուջետային պլանավորման ասպարեզում ունեցած անհաղթահարելի խնդիրներով: Մասնավորապես, 2024թ. պետական բյուջեով նախատեսված գրեթե բոլոր ցուցանիշները ճշտված պլանով վերանայվել են, սակայն փաստացի մեծություններից շատերը ոչ միայն զգալիորեն հեռու են եղել ճշտված պլանից, այլև ավելին, շատ դեպքերում դրանք ճշտված պլանից ավելի շատ են շեղվել, քան հաստատված պլանից:

Պետական բյուջեի հարկային եկամուտների և պետական տուրքերի՝ պլանի նկատմամբ թերակատարումը, ինչպես նաև տպավորիչ տնտեսական ակտիվության պարագայում գրեթե եռակի ցածր աճի տեմպը մտահոգությունների տեղիք են տալիս ՀՀ տնտեսությունում տեղի ունեցող բացասական զարգացումների շուրջ: Պատկան մարմինների կառավարման ցածր մակարդակի պատճառով ծախսերի թերակատարման շուրջ ձևավորված, տարիներ ի վեր առկա և արդեն «քրոնիկ» դարձած հիմնախնդիրը փաստում է, որ գործող իշխանությանն այդպես էլ չի հաջողվում լուծել պետական կառավարման համակարգում տնտեսության համար առանցքային ծրագրերի արդյունավետ իրականացման կարողությունների ապահովման խնդիրը: Արդյունքում, բյուջեի ծախսերի թերակատարման հետևանքով տնտեսության ներուժի տեսանկյունից կարևորագույն ծրագրերը իրականացվում են թերի (ոչ լրիվ կամ ժամանակին)՝ վտանգելով ինչպես ընթացիկ, այնպես էլ երկարաժամկետ տնտեսական աճն ու զարգացումը:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան *ակտիվ հղման* տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: